

Չարայէ՛ ԲուՓայէի վրայով դէպի Փոքր Հայք տանող ճամբան բաց կը գտնուէր ուրեմն այլ եւս Պոմպէոսի առջեւ: Նա այս բարեպատեհ առիթէն օգտուելով, շտապով մի քանի շոկատ զինուոր զրկեց դէպ արեւելեան եզերքն Եփրատի, ուր նաւակամուրջ մը ձգուելով, գործողութիւններու խաւրիսը Փոքր Հայք փոխադրուեցաւ: Իսկ ինքն, Պոմպէոս, հետապնդեց անյայտ թշնամի բանակը, հետահաս եղաւ անոր, ու պաշարեց զայն 28 քմ. երկայնութեամբ շրջապատ պատուարով մը: Այս պատուարը գտնուելու է Դաստրակոս լեւան վրայ, եւ ո՛չ թէ նոյնին ստորոտը, որովհետեւ հոս շատ աւելի ընդարձակ պէտք էր եղած ըլլալ շրջափակ դժին երկայնութիւնը:

Չարայէ դէպի նախկին Փոքր Հայոց երկիրն երկարող ճանապարհն տակաւին այսօր կը տեսնուի: Ան Կարաբայրի ու Սուչեհիբի վրայով դէպի ԲուՓայէ, եւ անկէ ալ անդին Գրան-խանի կրճէն դէպ Երզնկա կ'ուղղուի: ԲուՓայէէ սկսած կը բացուի հոն ուրիշ ճանապարհ մը եւս, որ էլ մտաւրջի լեռնամէջէն ուղղակի դէպի Քեմախ կը ձգուի: Ինչպէս էլ մտաւրջի լեռնածորը՝ նմանապէս նաեւ ԲուՓայէի շրջականերն ու Երզնկայի դաշտագետինը շատ լաւ մշակուած էին ընդհանուր պատերազմէն առաջ: Կ'ենթադրուի որ հնութեան մէջ եւս նոյնպիսի եղած ըլլալու էին անոնք: Հնար է մտածուիլ որ Փոքր Հայոց երկիրն այդ միջոցներուն ընդհանրապէս շատ աւելի բազմամարդ եղած ըլլար ու շատ աւելի լաւ մշակուած՝ քան ինչ որ էր ընդհանուր պատերազմէն անմիջապէս առաջ: Այս երկիրներէն էր ուրեմն որ Պոմպէոս վերցուց իր բանակին կարեւոր պարէնը եւ Սուչեհիբի փոխադրել տուաւ, որուն դաշտագետինը նմանապէս վերոյիշեալներուն կը հաւասարէր իր արտաքոյ կարգի արգաւանդութեամբը:

Միհրդատ այս պաշարման 45 օր տողակէ յետոյ՝ բանակին բոլոր բեռնակիր կենդանիներն ու գրաստները սպաննել տուաւ. իսկ ինքն օգտուելով մութ գիշերուան մը աղջամուղջէն, վերցուց յանկարծ բանակը, եւ Պոմպէոսի պաշարման գիծերը ճեղքելով՝ անհետացաւ: Իր այս աներկեւան փախուստին յամենայն դէպս նպաստած ըլլալու էին այն բազմաթիւ կիրճերն ու լեռնածորերն, որոնք հոն լեռնիվայր կը դարձնուին:

Միհրդատի գիտաւորութիւնն էր այս անգամ ալ Տիգրանի քով ապաստանիլ. սա-

կայն Պոմպէոս երկու օր յետոյ հետահաս եղաւ անոր, դարկաւ պոնտական բանակն գիշերային պատերազմի մը մէջ, ու բնաջինջ ըրաւ զայն:

Այս պատերազմին երկրպարական դիրքին մասին խոր մթութիւն կը տիրէ մինչեւ այսօր: Միհրդատեան պատերազմներու մասին խօսող մեր հնագոյն աղբիւրներն աւելի քան հարիւր տարի ուշ են ժամանակով: Այս պատմագիրներէ միմիայն Պլուտարքոս է որ վայրը կը նշանակէ ճակատամարտին — περὶ τὸν ἐνφρατῆν (չուրջ գեփրատաւ): Վկայութեանս իմաստը սակայն ընդարձակ մտքով առնուելու է. այսինքն թէ կուրբ տեղի ունեցած է Եփրատի քովերը մերձաւորապէս:

Եփրատէ՛ մերձաւոր հաշուով, 40 քմ. հեռու կը գտնուի այն տեղը, ուր ես կը կուսեմ թէ կրնար եղած ըլլալ թատերաբեմը պատերազմին: Հետեւաբար, Պլուտարքոսի վերոյիշեալ բացատրութիւնը հնար է նաեւ այս իմաստով մեկնուիլ: Բորդիլնայի ճակատամարտին՝ Մոսկուայի ճակատամարտն անունը տուին Փրանսացիք, մինչդեռ Մոսկուա շատ հեռու կը գտնուէր ռազմադաշտէն:

Ռազմաբեմը Դաստրակոս լեռնէն երկու օթեւան՝ որ է երկու օրուան գնացքի մը հեռաւորութեան վրայ կը գտնուի: Փաբրիկիոսի, — որ այս ճակատամարտին վայրը Երզնկայի քովերը կը նշանակէ, — այս ենթադրութեան դէմ կրկին առարկութիւն կարելի է ընել. Երզնկայէ երկու օթեւան հեռաւորութեան մը վրայ եւ Եփրատի քովերը չկայ ո՛րեւէ անկիւն մը, որուն պատշաճ գայ նկարագրութիւնը ճակատավայրին, եւ ո՛չ ալ Երզնկայի քով կարելի է հանդիպիլ այդպիսի լեւան մը, որուն յարմարի վերոյիշեալ նկարագրութիւնը: Կարելի է բնաւ ընդունիլ, որ Միհրդատ իրեն իբր բանակատեղի ընտրած ըլլայ ստորին մէկ սարաւանդը բարձրածայր լեռնաշղթային:

Որոնե՛նք ուրեմն խնդրոյ առարկայ լեռը: Ես կը միտիմ իբր այսպիսի նկատի առնուլ մեր վերեւ մատնանշած Սուչեհիբի մօտակայ լեռը, որուն գիրքը նկարագրութեան պայմաններուն լիովին համապատասխան ես կը գտնեմ: Համակարծիք եմ այս մասին Ռայնախի, թէ Պոմպէոս իբր յիշատակ իր այս յաղթութեան կանգնած ըլլայ Նիկոպոլիս քաղաքն ո՛չ թէ ուղղակի ռազմադաշտին՝ այլ նախապէս արդէն իսկ

գոյութիւն ունեցող Դաստրակոս տեղւոյն վրայ, որ հաւանօրէն անոր գլխաւոր օթեւանը, կամ թէ նոյն իսկ անոր գլխաւոր բանակատեղին եղած ըլլալու էր:

Նման դէպքի մը կը հանդիպինք նաեւ նոր դարու պատմութեան մէջ: Ուելլինգտոն իր ճակատամարտները նախորդ օրուան բանակատեղւոյն անունովը միշտ կը մկըրտէր: Այսպէս Բէլ-Սլիւանոսի ճակատամարտին՝ Վատերլոյի ճակատը անունը տուին Անգլիացիք, մինչդեռ այս վերջին վայրը երկու մղոն հեռու կը գտնուէր ռազմավայրէն:

Եթէ Միհրդատ հոռոմէական բանակը ճեղքելով Տիգրանի քով հասնիլ կ'ուզէր՝ կարող էր ամենամերձաւոր ուղիով միայն իր նպատակին հասնիլ: Ինչպէս վերը տեսանք, սպաննուած էին բոլոր բեռնակիր կենդանիներն ու գրաստները, աղիս ու կազմած չունէր հետեւաբար բանակը, որով զլուրին էր ենթադրել թէ զօրաց գնացքը սահմանափակ ու չափաւոր կրնար եղած ըլլալ: Բաց ասկէ, ստիպուած էր Միհրդատ ունէ տեղէ պարեն հոգալ իր բանակին համար: Այս ամէնն ահա, հարկադիր պատճառներ ինքնին, բաւական էին անշուշտ զինքն ստիպելու, որ յայնկոյս Եփրատի անցնելով՝ Հայաստան ապաստանէր: Կարելի է որ Միհրդատ իրագեկ ու տեղեակ եղած ըլլար թէ Պոմպէոս նաւակամուրջ մը ձգել տուած է գետին վրայ, եւ թերեւս մինչեւ անգամ մտաբերած իսկ ըլլար նա անոր տիրանալ, կարծելով գուցէ, թէ սակաւաճեռն պահակազօրաց միայն յանձնուած ըլլայ նոյնին պահակաութիւնը:

Ես իմ մտնիս պիտի նախընտրէի այս նաւակամուրջն առաւելապէս Կամախի քովերը փնտռել՝ քան Երզնկայի մօտերը, վասն զի այսօր դեռ Կամախէ անդին լեռնուղի մը կ'առաջնորդէ Եփրատի արեւելակողման դժուարասեպ լեռներու վրայէն, որոնք աւելի քան 3500 մետր բարձրութիւն ունին: Այնու իսկ որ Միհրդատ ո՛չ կտոք ունէր հետն եւ ո՛չ գրաստ, կարող էր իր բանակն յոռեղոյն արահետներու վրայէն անգամ անսայթաք յառաջ շարժել, եւ այդ լեռնակողման կածաններու վրայէն շտապով անհետանալ: Սուչեհիբի դէպի Կամախ կամ Երզնկա տանող ճանապարհն սակայն նախ ԲուՓայէ կը հանդիպի:

Օդային գծով իբր 40 քմ. հեռու կեն-

դրոնէն այս լեւան, որուն վրայ ես կը միտիմ փնտռել բանակատեղին Միհրդատի, կը մտնէ այս ուղին, Ալթթէօյ գիւղին քով, Կերճանիս գետին կիրճը: Ծի'չդ այս տեղ ահա իմ կարծիքովս կրնար տեղի ունեցած ըլլալ ճակատամարտը:

Պատմագիրներէ ոմանք այս պատերազմին Գայլ գետի ճակատամարտն անունը տուած են: Ես չեմ կարողացած սակայն ստուգել թէ նախնարար ո՛ր աղբիւրէ ծագում առած է այս անուանակոչութիւնը. եւ սակայն այս պարագան նպաստաւոր է ճակատամարտին տեղւոյն մասին իմ յայտնած վարկածիս: Կերճանիս գետն, որ Գայլ գետ կը թափի, ա՛յնքան ջրաշատ է, որքան այս վերջինս. այս պատճառաւ անկարելի չէ ենթադրել, որ հնութեան մէջ իբր գլխաւոր գետ ճանչցուած եւ կամ թէ նոյն իսկ ունէ ուղեւորէ մը իբր Գայլ գետ համարուած կամ կարծուած ըլլայ: Այս տեսակէտով Գայլ գետ անունն իմ ենթադրութեանս կը համապատասխանէ:

Ի՛նչպէրու ընթացքին անդրադառնալով, անոնք կրնային հետեւեալ կերպով դասաւորուած ըլլալ. Միհրդատ գիշերանց լեռնէն իջնելով՝ օրուան միջոցին ծառախիտ ու թաւ անտառները դադար առնուլ կու տայ իր զօրաց (Ապպիանոս): Եւ որովհետեւ երկիրն այսօր անտառակոտոր ու բոլորովին ծառազուրկ եղած է՝ անհնար է այլ եւս այդ վայրը մերձաւորապէս իսկ մատնանշել: Երկրորդ գիշերային շուէ մը յետոյ Միհրդատ լեւան մը վրայ կը բանակի, որ միմիայն մէկ կածան ունէր: Ես կը միտիմ այս լեռը փնտռել առաւելապէս ներքսակողմն ա՛յն անկիւնին (արմուկին) զոր Կերճանիս գետը կը գծէ հակելով դէպ արեւմուտք: Հո՛ս ուրեմն, ցերեկուան դադարի միջոցներուն է որ վրայ կը հասնի Պոմպէոս: Այս գործողութեան նպաստաւոր էր դիրքն այն կողման, զոր նշանակած էի ես վերեւ: Ասոր վրայ Պոմպէոս կը գրաւէ Ալթթէօյի մօտակայ Կերճանիսի կապանի մուտքին առեւտակողմն, եւ ձորին երկու կողմերն երկարող բարձունքները: Ես զարմանալի չեմ գտնել բնաւ, թէ ինչպէս Պոմպէոս տեղեկութիւն չեն ունենար իրենց շուրջը տեղի ունեցող այս իրադարձութիւնէն, վասն զի բանակին բացարձակապէս կը պակսէր զօրացուերու ապահովութեան համար անհրաժեշտ սպասարկութիւնը, ինչ որ հետեւեալ դէպքէն ակնբերել կը տեսնուի:

Պոնտական բանակն իր չուն չապահոված կապան մտաւ գիշերանց: Հազիւ թէ բանակին առաջին շարքերն սկսած էին հոն յառաջանալ՝ յանկարծ անոնց վրայ խոյսացան Հոռոմայեցիք: Պոնտական բանակն այս յեղակարծ յարձակումէն սարսափահար՝ խուճապի մատնուեցաւ ու կոտորուեցաւ անխնայ:

Հոռոմայեցիք ամէն պարագայի մէջ գրաւած ըլլալու էին ձորին երկակողմեան բարձունքները: Զորագետն, որ աշնան հունելի է, իբր բնական արգելք ունէր դեր կատարած չէր: Հնար է այս դէպքը հետեւեալ կերպով պատկերացնել մեր մտքին մէջ. Պոնտական բանակին մեծ մասն նեղ կապանին առաջակողմը կը գտնուէր արդէն, եւ հետեւող զինուորներն Ալթֆէօյի կողմէ խուճապական փախուստի ենթարկուելով՝ սոյն նեղ կապանին մէջ ահաւոր խճողում ու խառնակութիւն մը կը ծագէր, եւ այսու ամէնքն առհասարակ սրահոտոր կը սպաննուին: Շատ կարելի է որ զօրասիւնին վերջին շարքերը տակաւին իջած չըլլային լեռնէն, ուր դադարած էին, եւ այս խուճապին վրայ անոնք վայրավատին ցրուած ըլլան ամէն ուղղութեամբ: Գուցէ թէ Միհրդատ եւս գտնուէր այս փախստականներուն մէջ: Այս անակնկալ դժբախտութեան վրայ դէպի կապան յառաջանալ բնական է թէ չէր հնար մտաբերել անգամ. հետեւաբար խոյս տուաւ դէպի լեռնակողմերը հիւսիսի՝ ընկերակցութեամբ իր սակաւթիւ մտերիմներու, ինչպէս նաեւ իր սիրուհւոյն Հիպսիկրատայի, որ հետագայ ձիարշաւ փախուստներուն եւս մասնակցեցաւ՝ նժոյգի մը վրայ նստած: Պոնտական բանակին վարատական այս զինուորներէն խուճք մը սակայն հետզհետէ դարձեալ համախմբուելով՝ Միհրդատ անոնց ընկերակցութեամբ մտաւ Սինորիա ամրոցը: Այս ամրոցը, իմ կարծիքովս, այժմ մեան Բաբերդ քաղաքն ըլլալու է, որովհետեւ Միհրդատ ասկէ չորս օրուան մէջ կարողացաւ Եփրատի ափունքը հասնիլ, ինչ որ Բաբերդի երկրագրական դիրքին յարմար կու գայ: Բաբերդի մէջ տակաւին այսօր կը տեսնուին վիթխարի ամրութեան մը հինաւուրց աւերակները:

Միհրդատի դիտաւորութիւնն էր ուրեմն, ինչպէս ըսինք, դարձեալ Տիգրանի քով ապաստանիլ: Սակայն մինչեւ Եփրատի ակնադիւրները յառաջանալէ յետոյ երբ իմացաւ թէ Տիգրան զին սահմանած է իր

գլխոյն, իսկոյն փոխեց իր ճամբան, եւ Թորթոմի ու Ճորթի հովիտներէն երիվաբելով՝ հասաւ Սեւ ծով, եւ անկէ ալ անդին քերեց շարունակ ծովեզերքը մինչեւ Խրիմ, ուր վերջակէտը դրաւ իր դժբախտ կեանքին:

Պոմպէոս ետ կեցաւ զինք հետապնդելէ, եւ Եփրատի ակնադիւրներու՝ որ է ըսել այժմեան Կարնոյ (Էրզրում) ճամբով մտաւ Երասիի հովիտը, եւ գետին ուղղութեամբ յառաջանալով մինչեւ Արտաշատ, զարկաւ Տիգրանի բանակը, եւ իր պայմանները պարտադրեց անոր: —

Իբր վերջարան ուսումնասիրութեանս, կ'ուզեմ հոս հարեւանցի ակնարկ մը եւս նետել Միհրդատի կարողութեան վրայ ընդհանրապէս իբր զօրավար:

Միհրդատեան պատերազմները կարելի է երեքուրոյն չըջաններու վերածել: Առաջին պատերազմին, Միհրդատ իր տրամադրութեան տակ ունեցաւ բարբարոս բանակ մը, ու պարտուեցաւ: Յետոյ կազմակերպեց իր բանակն նոր ոճով, յար եւ նման հոռոմէականին, անձամբ վարելով նոյնին հրամանատարութիւնն, եւ սակայն դարձեալ պարտուեցաւ: Այս դէպքերն ինքնին ուրեմն դեռ բաւական չեն կրնար ըլլալ անոր ենթակայական արժէքն իբր զօրավար բարձր գնահատել կարենալու: Հոսկ յետոյ ի վիճակի չեղաւ թշնամւոյն համազօր բանակ մը կազմելով Հոռոմայեցուց դիմադրել: Ասոր վրայ, պարագաներու ճնշման ներքեւ, ստիպուեցաւ դիմել ռազմական նոր եղանակի մը, զոր նա 69 թուին յանձնարարած էր արդէն Տիգրանի: Այս կերպ մղուած կռուին արդիւնքէն տեսնուեցաւ որ ռազմավարութիւնը լաւ նախատեսուած էր: Ծակատամարտ մղելէ խուսափեցաւ Միհրդատ՝ շարունակ նահանջելով, կամ անառիկ լեռներու վրայ բանակելով, եւ միաժամանակ վտանգելով թշնամւոյն պարենաւորման դիժը:

Միհրդատի յաջողութիւն չբերաւ սակայն պատերազմելու նաեւ այս նոր եղանակը, որմէ յետոյ գերագանցօրէն գիտցան օգտուիլ Պարթեւներն իրենց ապագայ պատերազմներու միջոցին: Ռայնախ անտարաւ կոչս այս պարագան միայն նկատի առնելով՝ զՄիհրդատ հնարիչը համարած է նորածեւ այս պատերազմի, զոր նախապէս նա Հոռոմայեցուց դէմ կերարկեց: Այս տեսակէտը ճիշդ ըլլայ թերեւս Ասիոյ համար: Այս ձեւ

պատերազմ մը բնականաբար նախընտրելի կրնար ըլլար բանակի մը հրամանատարին, որ ինքզինքը տկար կը դգար, բաց դաշտի վրայ, թշնամւոյն հետ չափուելու: Նման կռիւ մըն էր որ մղած էին երբեմն նաեւ Սկիւթացիք՝ ընդդէմ Դարեհի, ու աւելի յետոյ Գերմանացիք՝ ընդդէմ Վարոսի հոռոմէական լեզէոններուն: Այս կերպ մղուած պատերազմէ մը յաջողութիւն կարելի է ակնկալել ա՛յն ատեն միայն, երբ թշնամի բանակն, որ սկզբան թուական գերակշռութիւն ունեցած էր, սկսած կ'ըլլայ հետզհետէ տկարանալ: Այսպէս պատահած է պատմութեան ամբողջ ընթացքին մէջ մինչեւ Նապոլէոնի արշաւանքը (1812):

Իրերու այս հանգամանքէն սոսկ դատելով ես երբեք համակարծիք չեմ կարող ըլլալ Ռայնախի, որ զՄիհրդատ՝ իբր զօրավար, իր իսկական արժէքէն անհամեմատ բարձր կը գնահատէ, եւ ա՛յն՝ պարզապէս որովհետեւ նա հնարիչն եղած է ռազմական այս նորածեւ եղանակին: Ընդհակառակն ես շատ աւելի ճիշդ կը գտնեմ Մոմսէնի՝ Միհրդատի անձին, ինչպէս նաեւ անոր զինուորական ձիրքերուն նկատմամբ ունեցած հետեւեալ տեսութիւնը. «Ինք (Միհրդատ) հանձարեղ մարդ մը չէր, եւ ո՛չ ալ հազուադիւր ձիրքերով օժտուած մէկը: Ունէր մեծ կարողութիւն մը ատելու, եւ այս ատելութիւնն էր որ իրեն ոյժ ներշնչեց կէս դար ամբողջ հզօրագոյն թշնամւոյ մը դէմ կռուելու, թէեւ անյաջող՝ սակայն միշտ պատճառով:» Թերեւս այս դատաստանը չափազանց խիստ ըլլայ, եւ իր բոլոր երանգներովն իրականութեան լիովին համապատասխանէ: Փաստ է, որ Միհրդատ բնատուր շատ բարձր ձիրքերով օժտուած էր. սակայն, դժբախտաբար, հօրը մահուրէն յետոյ նշաւակ եղած ըլլալով իր խնամակարներուն՝ — գուցէ նաեւ իր մօրը — դաւաճանութեան, ստիպուեցաւ մետասանամեայ պատանին թողուլ իր հայրենական տունն ու Սինոպէ մայրաքաղաքը, եւ առանձնանալ լեռներու վրայ, ուր ապրեցաւ եօթն տարի շարունակ: Հոն պնդացուց իր մարմինը խստամբերութեամբ ու խիզախ կռիւներով, որոցմէ չափազանց կ'ախորժէր: Պատեհ առիթը պակսեցաւ անոր՝ իր մոլի կիրքերը չափաւորելու: Չունեցաւ երբեք իրապէս ռազմագէտ դաստիարակուսուցիչ մը, որ անոր զինուորական բնատուր այս ձիրքերը զարգացնելով՝ կատա-

րեալ զօրավար մը ստեղծէր անկէ: Իր ռազմավարութեանն եւս վերապահուած էր այն դաժան ճակատագիրը, որով պարուրուած էր իր ամբողջ կեանքն ընդհանրապէս: Հելլենականութեան մը շարքին ներքեւ անգամ նա մնաց միշտ միեւնոյն բարբարիկ բռնապետը: Ինքն չէր յամենայն դէպս ա՛յն անձը, որ պիտի կարենար Ալեքսանդր Մեծի սկսած ձեռնարկն — Ասիականութեան եւ Հելլենականութեան ձուլումն — իրագործել. նպատակ մը, զոր անոր կ'ուզէ վերագրել Ռայնախ, եւ զոր գուցէ, հնար է թէ երազած ըլլար նա: Մէկ խօսքով, «Միհրդատ, իր կեանքի տեւողութեանը», — Շլիֆէնի բառերը գործածելով, — «ամենի ճլաղուիլը միայն նուաճեց, սակայն Արիստոտելի մը սուքերուն առջեւ չնստաւ երբեք»:

(Վերջ:)

Հ. Գ. ԳԱՐԱՍՓՆԵԱՆ



Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ք
ՍՏԱՄԳՈՒՆՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻԻ ՔԵՕՍԻԻՐՃԵԱՆ

Գ Լ Ո Ւ Խ Զ .

(Շարունակութիւն:)

ՏՈՂ 211: «Սան Ճորճի է քիլիսան այն»: Գաղղիացու Ս. Գեորգ եկեղեցին է այս, որ այժմս իսկ կը կենայ Ղալաթիոյ Բէնշէմուլէ բազարի կողուած վայրին բարձունքին վրայ: Վենետիկի Միթիթարեան Միաբանութիւնը 1806 ին այս եկեղեցին մէջ կը փոխադրէ իւր «Մանկանց Դպրատունը», զոր 1803 ին բացած էր Ղալաթիոյ ուրիշ մէկ կողմը, այսինքն Յիսուսեանց եկեղեցին:

Այս վարժարանի մասին Վենետիկի Միթիթարեանց Աթոռակալ Հ. Յովհաննէս Ծ. Ա. Թորոսեան վանքի Դիւանատունէն քաղելով կը գրէր ինձ 1928 յունվարին, հետեւեալ կարեւոր տեղեկութիւնը:

«1803 նոյնմ'. 10 Ամիրայք՝ Միթիթար ծաղիկեան, Ստեփան Ասկերեան, Աթանաս Մազլըմեան կը գրեն. վիշտս